


15882



1988

ԵՐԻՄՆԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆ

(ԵՐԻՈՒՄՆ)

ԲԱՑԱՏՐԱԾ ՍՏՈՐԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

207

Յ օ բ է ն ե ց

ՊՕԴՊՈԼԿՈՎՆԻԿ ՏՕՄԻԼԻՆ

Թարգմանութիւն ռուսերէնից

ՀՐԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՆԴԱՊԵՏ ԱՂԵՔՍԱՆԴՐ
ԹՈՎՄԱՍԵԱՆ ՄԵԼԻՔ—ՀԱՅԿԱԶԵՍԵՆՑԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսիսի Վարդանեան

1888

55.2

5-33

2.001

2010



ԵՐԻՄՆԵԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆ

(ԵՐԻՈՒՄՆ)

ԲԱՑԱՏՐԱՆ ՍՏՈՐԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

355.9

S-83

Յ Շ Խ Ե ց

ՊՕԴՊՈԼԿՈՎՆԻԿ ՏՕՄԻԼԻՆ

— օ ջ մ ա ռ ո ւ կ օ ս —

Թայլանդուած է տարածել զօրքի մէջ. Երջաբ. Գլխաւ.
Շտաբի. 1886 թ. № 196

Թարգմանու թիւն ո ուսերէնից

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴՆԴԱՓԵՏ Ա.Գ.Է.ՔՍԱՆԴՐ
ԹՈՎՄԱՍՍԵՍՆ ՄԵԼԻՔ—ՀԱՅԿԱԶԵՍՆՑԻ

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մովմիսի Վարդանեան

1888



ԵՐԻՄԱԿԱՆ ԽԱՍՏՈՒՄՆ
(ԵՐԻՄԱԿ)
Պատմութեա Հայոց ԱՅՆԱՅԻ
ՏԱՍՏԱ
ՎԱՐԴԱ
Ա Տ Ա Վ Ա Բ
ՀԱՅՈՑ ԽԱՍՏՈՒՄՆ

Доз. Ценз Тифлисъ, 22 Ноября, 1888 г.
Тип. М Вартанянцъ, Тройц. пер. д. № 11

50515-ան



36443-66

առաջ վեհ գոզան զնորդ ուն առ առաջ
զոր է զարդ բան ու պատճեան
և զելի ուժամբ մանր զանուն
ու անունու զնորդ ուն
շնորհ առաջ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ
ԵՐԻՄԱԿԱՆ ԽԱՍՏՈՒՄՆ
(ԵՐԻՄԱԿ)

ՐԱՅԱՐԱՇ ՍՅՈՐԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ձեզանից ամէն մէկը ծառայութեան մը-
տած օրը երգուել էք, այսինքն երդմամբ
մի խոստումն էք արել Աստուծոյ առաջին
եւ վերջը համբուրել էք Փրկի աւետարանն
եւ խաչը:

Մարգս սորանից աւելի մեծ խոստումն
չի կարող անել. իսկ ով իւր խոստումը չը
կատարեց, նա պատասխանառու է Աստու-
ծոյ եւ մարդկանց գատաստանի առաջին:

Որպէս զի ձեր իիղճը մաքուր լինի Աստու-
ծոյ եւ մարդկանց առաջին, պէտք է դուք
լաւ հասկանաք երդման նշանակութիւնը եւ
սրբութեամբ պահպանէք:

Դուք երդուել էք. ա. անկեղծութեամբ
եւ հաւատարմութեամբ ծառայել Թագաւոր-
ին եւ նորա ժառանգին՝ չը խնայելով նո-
ցա համար ձեր անձը՝ մինչեւ ձեր արեան
վերջին կաթիլը:

Ք. Արտաքին եւ ներքին թշնամիներից քա-
ջութեամբ պաշտպանել նրանց եւ Հայրենիքը:
Գ. Այն ամէն բանի համար, ինչ որ Թա-
տորի շահերին հակառակ է, ինչ որ կարող
է վնաս եւ կորուստ պատճառել, լաելուն պէտ
պարտական էք ոչ միայն նախապէս տեղե-
կութիւն տալ, այլև ամէն միջոց գործ
դնել թոյլ չը տալու եւ առաջն առնելու:
Գ. Ամենայն գաղտնիք, ինչ որ ձեզ հաւա-
տացած է, սրբութեամբ պահպանել: Ե. Ան-

պայման հպատակել ձեր մեծաւորի կամքին:
Պ. Ձեր զօրաբաժնից, ձեր դրօշակի տակից
երբէք չը հեռանալ եւ մինչեւ ողջ էք, գնալ
նոցա ետեւից, եւ է. ամէն ժամանակ եւ
ամէն հանգամանքում այնպէս պահել ձեզ,
ինչպէս արժան եւ վայել է ազնիւ, հաւա-
տարիմ, հնազանդ, քաջ եւ անձնուէր մար-
դու:

Ես ձեզ բացատրեմ, թէ ով է Թագաւորը
եւ ինչ է Հայրենիքը, որոց համար դուք
երդուեցիք չը խնայել ձեր անձը՝ մինչեւ ա-
րեան վերջին կաթիլը:

Թագաւոր. Թագաւորն է Աստուծոյ
ընտրեալը, Աստուծոյ Օծեալը. Նորան է հա-
ւատացել Աստուծ մեր Հայրենիքը, որի
լիակատար եւ անսահման իշխողն եւ Հրա-
մանատարն ինքը Թագաւորն է:
Թագաւորին պէտք է հնազանդել ոչ թէ
միայն երկիւղ կրելով նորանից՝ ինչպէս մի

իշխանաւորից, որի ձեռքին է մեր վիճակը,
մեր կեանքը. այդ բաւական չէ. Նորան պէտք
է հնազանդել եւ խղճի մտօք. լսա որում
նա մեր Ամենողորմած Հայրն է, որովհետեւ
ինչպէս Հայրը հոգում է իւր որդւոց եր-
ջանկութեան եւ բարօրութեան մասին, նոյնն
է անում եւ ինքը Թագաւորը մեր ամէնքիս
համար: Թագաւորի կամքը սուրբ է, Աստու-
ծոյ իմաստութիւնն է նորան առաջնորդում
եւ ղեկավարում՝ մեզ կառավարելու ժամա-
նակ: Ուրեմն Թագաւորի կամքը ըլ կատա-
րողը, նորան հակառակողը հակառակ է Աս-
տուծուն:

Հայրենիք: Այն՝ ինչ որ կոչուում է
Ուուսիա, այն՝ ինչ որ գտնուում է մեր Թա-
գաւորի իշխանութեան ներքոյ, մեր Հայրե-
նիքն է. բոլոր նահանգները, գաւառները
մեր Հայրենի երկիրն են, իսկ մեր ծնած-
տեղը, որ թաղուած են մեր պապերը, մեր

հայրերը, քաղաք է նա, աւան է, գիւղ է,
միեւնոյն է, այն մեր սուրբ ծննդալայրն է:
Ուուս Ժողովուրդն ի հնուց անտի յայտնի
է իւր հայրենիքի անկեղծ սիրով, նա ամէն
ժամանակ պատրաստ է ամենայն անձնազր-
հութեամբ նորան պաշտպանելու: Եղել են նեղ
օրեր, երբ Թուրքը, Ֆուանցուղը յարձակուել
են Հայրենիքի վերայ, բայց Ժողովուրդը ոտ-
քի է կանգնել եւ թշնամին փախել է: Հայ-
րենեաց պաշտպանութիւնը միշտ համարուել
եւ համարուում է մի սուրբ գործ: Եւ միթէ
կայ մեր մէջ մի հատ մարդ, մի Ուուս,
որ իւր գլուխը, իւր սեպհականութիւնը յետ
ըլ գնի իւր հայրենի աշխարհի, իւր սուրբ
ծննդավայրի եւ միաժամանակ նորա հա-
մար, որի հոգատարութեանն է յանձնել Աս-
տուծուած այն ամէնը: Թագաւորն եւ Հայրե-
նիքն անքաժան էակներ են. Հայրենիքը մար-
մինն է, Թագաւորը՝ հոգին:

ԵՐԴՄՆԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆ (ԵՐԴՈՒՄՆ.)

Հաւատարմութեամբ ծառայել—
նշանակում է ճշդութեամբ, եռանդով եւ
տոկունութեամբ կատարել Թագաւորի կամքն
եւ հրամանը. ուրեմն նորա թշնամիների եւ
չարամիտների ոչ մի հրապոյրը, սպառնալիքը,
մինչեւ անգամ մահը չը պէտք է կարողա-
նան խախտել նորանից ձեր հաւատարմու-
թիւնը:

Ոռուսական գինուորը շատ վաղուց յայտ-
նի է աշխարհին իւր դէպի Թագաւորն եւ
Հայրենիքն ունեցած հաւատարմութիւնովն
եւ անձնութրութիւնովը, շատ անգամ է
նու ապացուցել, որ ինքը պատրաստ է ար-
դարեւ իւր անձը զոհել նրանց համար:

Ա.Հ. ձեզ ամենամօտիկ անցեալից մի օ-
րինակ: 1880 թուին մեր անմոռանալի հե-
րոսը—գեներալ Սկօբելեվը պաշարեց Թե-

քինցիների Գեօգ—Թափայ կոչուած ամրոցը:
Դեկտեմբերի 30-ին պաշարուած Թեքինցի-
ները յարձակումն գործեցին, եւ թէպէտ շու-
տով ցըսւեցան, բայց կարողացան գերի ա-
նել 21-րդ ռմբածիգ բրիգադի թնդանօթա-
ձիգ Աղաֆօն Միկիտին անունով մի զին-
ւորի: Թեքինցիք կամեցան ստիպել Միկիտի-
նին, որ նա թնդանօթ արձակի մեր գորքի
վերայ, բայց ոչ նոցա խնդիրը, ոչ յորդորն
եւ ոչ սպառնալիքը կարողացան ազդել Մի-
կիտինի վերայ. նա միանգամայն մերժեց
կատարել նորանց կամքը: Այն ժամանակը
նորան ենթարկեցին սարսափելի տանջանք-
ների, նորա թիկունքի կաշին զօլ-զօլ քեր-
թեցին, մատները կտրատեցին եւ Միկիտինը
հերոսաբար մեռաւ անտանելի տանջանքների
մէջ եւ չը դաւաճանեց. նա հաւատարիմնաց
Թագաւորին եւ Հայրենիքին: Իրանք՝ Թեքին-
ցիքը Գեօգ—Թափէն առնելուց յետոյ, յար-

գանքով եւ զարմանքով պատմում է Եին Աղա-
ֆօն Միկիսինի հերոսական մահը:

Աղափօն Միկիսինի փառաւոր յաղթանակն
անմահացնելու համար Բարձրագոյն հրամա-
մայուած է բոլոր ռմբաձիգ զօրաբանակի
մէջ սոտրագրութիւն բանալ՝ նորա վերայ ար-
ձան կանգնացնելու:

Այս նահատակ—հերոսը Սուխագեամն նա-
հանգի, Կալվարի գաւառի, Կիբոր գիւղիցն
էր: Կալվարի գաւառի ժողովուրդն իւրեանց
հարազատ հերոսի յիշատակն անմահացնե-
լու: Համար որոշեցին Կալվարի քաղաքումը
սուրբ Աղափօնի անունով մի եկեղեցի կա-
ռուցանել, այն պայմանաւ, որ այն տաճա-
րում յաւիտեան յիշատակուին իւրեանց նա-
հատակ հերոսն եւ առ Ս. ստուած հանգու-
ցեալ Աղէքսանդր Բ. Կայսրը: Թագաւոր
Կայսրը բարեհամեց հաւանել Կալվարեցւոց
արածը եւ իւր սեպհական ձեռքովը մակա-

գրեց: «սրտանց շնորհակալութիւն անել»:
Ահա, թէ Թագաւորն եւ Հայրենիքն ինչպէս
են յարգում եւ պատուում իւրեանց քաջ նա-
ռաների սիրագործութիւնները: Միաժամա-
նակ բարձրանում են գէպի Ամենաբարձրե-
լոյ Աթուն աղօթք եւ բարեմաղթութիւններ՝
Թագաւորի եւ նարա ազնիւ ու հաւատարիմ
ծառայի—քաջ զինուորի հոգւոց վրկութեան
համար: Ճշմարիտ, որ վասուաոր է Միկի-
սինի քաջագործութիւնը, նա կարող է լիա-
կատար օրինակ գառնալ ձեզ, երբ որ գուք
գործ կունենաք Թագաւորի եւ Հայրենիքի
ամէն մի թշնամու հետ: Միկիսինին ըլ
հրապուրեցին ոչ խոստունքներն ու պա-
տիւնները եւ ոչ մեծ հարասութիւնը, որ նո-
րան առաջարկում էին, նա գերադաս հա-
մարեց այն ամենիքից մարտիրոսական մահը,
որպէս զի գաւաճան անուն չը տանի, երգմ-
նագանց ըլ համարուի: Կոր գործովը նա ա-

պացուցեց թշնամիների առաջին, թէ Առուսի զինուորն ինչպէս է սրբութեամբ յարգում իւր երգումը, որ նա արել է հաւատարիմ լինելու Թագաւորին եւ Հայրենիքին։ Թագաւորն եւ Հայրենիքը փոխադարձապէս վարձատրել են քաջ հերոսին իւր արած ծառայութեանց փոխարէն։ Նորա արձանը զարդարում է Կովկասեան լեռների մէջ գտնըւած Թեմիրխան ։ Նուրայ քաղաքը։

Անկեղծութեամբ ծառայել—
Նշանակում է ծառայել առանց կեղծաւորութեան, խորամանգութեան եւ նենգաւորութեան, ինչ ասել, այն էլ կատարել, թէ դէմ յանդիման եւ թէ աչքից հեռու։
Ով որ առաջիդ կանգնած ժամանակ պատրաստակամութիւն է ցոյց տալիս յանձրն առնել ամենատեսակ անձնազոհութիւն, իսկ քեզանից հեռանալով ուրիշ է ասում եւ ուրիշ է գործում, նա նենգաւոր

է, նա շրջաքորթող է. եթէ նորա արածը մարդից ծածուկ կը մնայ, չի կարող թագչիլ Ամենատես եւ Ամենագէտ Արարյի աչքից, որ գիտէ ոչ միայն մեր գործերը, այլ եւ մեր մտքի խորհուրդները։ Աստուած կը շփոթի այնպիսի մարդու գործերը, նորա կեղծաւորութիւնը, խորամանգութիւնն եւ ներգաւորութիւնը կը յայտնուին, նա կը պատժուի եւ ոչ ոք նրան ոչինչ չի հաւատալ։

Զը ինայել իւր անձը մինչև արեան վերջին կաթիլը— Նշանակում է, եթէ ձեր կեանքը հարկաւոր լինի Թագաւորի պաշտպանութեան համար, դուք, ինչպէս նորա հաւատարիմ ծառաներ, ըլպէտք է խնայէք, պէտք է կռուէք թշնամու հետո մինչեւ որ ձեր հոգին ձեր մարմնից չի հեռացել։

Արտաքին և ներքին թշնամուներից քաջութեամբ պաշտպանել Թագաւորին եւ Հայրենիքին։ Քաջութեամբ—նշանակում է երբէք ոչ մի թշնամու առաջից յետ չը նահանջուիլ, այլ գնալ եւ ջարդել նորան, երկիւղ չը կրելով մահից եւ լիշելով տուած երգաւմը։ Ոռոսի զինուորն երբէք չի հարցրել եւ չը պէտք է հարցնի թշնամու որքանութիւնը, այլ պէտք է հարցնի, թէ ուր է, ո՞ր տեղ է նա, որ պէս զի գնայ եւ յաղթի նորան։ Քաջ զինուորը պատերազմի ամենասարսափելի բռպաէին չի գողում, իրան չի կորցնում, այլ համարձակ յառաջ է գնում ջարդելու, ծածկելու թշնամուն իւր սուխնով. նա լաւ է համարում մեռնել, քան թէ յետ նահանջել. Ոռոսի զինուորի քաջութիւնը, տոկունութիւնն եւ արիութիւնը նախնիքներիցն են ժառան-

գութիւն մնացել իրեն։ 972 թուին Ոռոսիշխան Սլեատօսլաւը, որ վագրի արագութեամբ էր յարձակուում թշնամու վերայ, հանդիպեց պատերազմով Յունաց Զմշկիկ կայսերը։ Երկու կողմի ոյժերը հաւասար չէին, Յոյները բազմաթիւ էին։ Սլեատօսլաւը դարձաւ իւր սակաւառը զօրքերին եւ բացատրեց նորանց իւրեանց դժուար դրութիւնը։ Զօրքը նորան պատասխանեց. «Կը մեռնինը եւ չենք արատաւորիլ Ոռոսի անունը. մեռնելը անպատուութիւն չէ։» Նոռա կատարեցին իւրեանց խոստումը։ Յունաց 100000-աւոր բանակը չը կարողացաւ վնասել մի բուռն քաջերին։ Հարիւրաւոր տարիներ են անցկացել եւ Ոռոսի զօրքի հոգին, քաջութիւնը, արիութիւնն եւ տոկունութիւնը նոյնն են մնացել։ Յուլիոտիկի «քաջամարտիկ— հերոսներն» էլ ուրախ երգերով մի օր գրոհ տուին իւրեանցից տաճնապատիկ աւելի զօրեղ

թշնամու վերայ եւ ջարդեցին նորամնց. «քա-
ջամարտիկ—հերոսներն» ամոց կացան Ալպեան
երկնաբերձ լեռները անանցանելի կիրճերի
միջով եւ խորտակեցին թշնամու գնդերը:

Բաւական ժամանակ է անցել «քաջամար-
տիկ—հերոսների փառահեղ յաղթութիւնից
ցայսօր, իսկ Ռուսաց զինուորը մի եւ նոյնն
է: Բաւական է միայն յիշել վերջին Թուր-
քական պատերազմի ժամանակ օգոստոս ամ-
սին Նիբկայի պատերազմը եւ գեներալ Գուր-
կոյի զօրաբանակի Բալկանեան լեռների վը-
րայուլ Սօֆիա անցկենալը՝ եւ ահա մենք կը
տեսնենք, որ Ռուսաց զինուորը նոյնպէս մեռ-
նում է, որպէս զի չարառաւորի Ռուսի ա-
նունը, նա նոյն «քաջամարտիկ—հերոսն» է:
Նիբկայումը սարի մօտ դարանամուտների ինն
վաշտ Օրլովցիք եւ նրեանցիք դիմադրեցին
Տաճկի 19 բատալիոնին: Երկար ժամանակ
քաշեց անհաւասար պատերազմը եւ ահա

երկնամբարձ Բալկանի բարձրութեանց վե-
րայ հնչեցին յաղթական երգերը, իսկ ներքեւը
մեր «քաջամարտիկ—հերոսները» ջարդեցին,
խորտակեցին մեր Թագաւորի եւ Հայրենիքի
թշնամուն եւ ոչնչացրին:

Իոկ համարձակ կարելի է, որ ասել Բալկա-
նեան լեռներից անցնելը, այն լեռներից, ու-
րոնց կատարները կորչում են երկնքի ամ-
պերի մէջ, այնպիսի սառնամնիքին, այն-
պիսի մրրիկների եւ բուքերի միջից՝ առանց
ոչնիչ անցքի ու ճանապարհի հետքի կարող
էին կատարել միայն մեր «քաջամարտիկ—
հերոսները»:

Ահա, թէ ինչպէս է եղել մինչեւ ցայսօր
Ռուսի զօրքը: Միեւնոյն «քաջամարտիկ—
հերոսը» պէտք է գառնաք եւ դուք, երբ
կը գնաք պաշտպանել Թագաւորին եւ Հայ-
րենիքը:

Արտաքին թշնամի: Այն ազգն, այն



ժողովուրդն է, որ մեր Թագաւորի իշխանութեան սահմանից դուրս է գտնուում։ Որովհետեւ մենք այս բռակէիս չունինք ոչ մէկի հետ պատերազմ, չունինք ուրեմն եւ արտաքին թշնամիներ, բայց հէնց որ մի ազգի դէմ պատերազմ յայտնուեց, նա դառնում է մեր արտաքին թշնամին։

Ներքին թշնամի։—Դա մեր ընտանի, անարգ, ստորաբարշ թշնամին է, որ մեր մէջ է բնակուած։ Նու յանդգնում է ըլ հպատակել Թագաւորի սրբազնն անձին, ուրիշներին էլ հրապուրում է ըլ հնազանդել եւ հակառակում է Թագաւորի բարերար օրէնքներին։ Դա ոչ այլ ոք է, եթէ ոչ խոռվարաների, ապատամբների, անպիտանների, աստուածամոռների եւ խղճմուանքը մեռածների մի վոհմակ (шանկա). այդպիսի մարդկանց աչքը չի տանում անմել իւրեանց մերձաւորի խաղաղ եւ երջանիկ կեանքը։ Յա-

լիտեանս ըլ պէտք է մոռանանք մեզանից ամէն մէկը՝ ինչ որ արեցին այն գարշելի գազանները. այն ցած վարմունքն եմ ասում, որպի նրանք ապացուցեցին, թէ իւրանք արդարեւ ժողովրդի թշնամիքն են, Հայրենիքի թշնամիքն են։ Խօսքս մեր պաշտելի եւ ամէնքից սիրուած Սրբայի՝ Աղէքսանդր Բ. Ազատարար Թագաւորի վախճանի մատին է։ Եւ եթէ այդպէս է, ուրեմն մեզանից ամէն մէկը, որի անունը Ուու է, պէտք է ամենայն զօրութեամբ աշխատի արմատախիլ անել Հայրենիքի այդ թշնամիներին։ մանաւանդ դուք՝ որ կոչուած էք Թագաւորին եւ Հայրենիքը պաշտպանել թըշնամիներից՝ դուք առաւել պէտք է ձգտէք այդ նպատակին, դուք, ասում եմ, որ երդուել էք Սատուծոյ առաջին Թագաւորի փառքի եւ մեծութեան համար, Հայրենեաց հանգստառութեան համար ըլ ինսայել ձեր

անձը՝ մինչեւ ձեր արեան վերջին կաթիլը:

Այն ամէն բանի համար, ինչ որ Թագաւորի շահերին հակառակ է, ինչ որ կարող է պաս և կորուստ պատճառել, լսելուս պէս սլարտական եմ ոչ միայն նախապէս տեղեկութիւն տալ, այլև ամէն միջոց պէտք է գործ դնեմ լծոյլ չը տալ և առաջն առնել: Դուք պարտական էք Թագաւորի մեծութեանը զնաս պատճառող անհեթեթ եւ անտեղի լուրեր տարածող մարդկանցը բռնել, իշխանութեան կամ ոստիկանութեան ձեռքը մտանել նրանց, որոնք Թագաւորի անձի դէմ վատ են խօսում, պարտական էք բռնել ապօրինի եւ խռովայոյզ գրութիւններ տարածողներին, եւ երբ որ կ'իմանաք չարամիտների ժողովատե-

ղիները, պարտաւոր էք անմիջապէս յայտնել իշխանութեանը: Իսկ այդ ամէնի վորսարէն ի՞նչ է ձեր վարձը, եթէ ոչ Հայրենեաց գոհհունակութիւնը եւ Թագաւորի ողորմութիւնը: Անձնատուր մի լինիք Թագաւորի եւ Հայրենիքի ժշշամիների ոչինչ հրապուրանքներին եւ ոչ մի խոստումներին, մի խարուկիք փողով, մի վախէք ոչինչ սպառնալիքներից, եւ ով որ կուզէ ձեզ համոզել, չար խրատներ տալ ձեզ քանդելու ձեր երդումը, բռնեցէք եւ իշխանութեանը ներկայացրէք: Գործեցէք քաջաբար եւ անձնապաստանութեամբ:

Ինձ հաւատացած ամենայն գաղտնիք պէտք է պինդ պահպանեմ: Պինդ պահպանել նշանակումէ ամենատեսակ հաւատացած գաղտնիք ոչ ոքի չըյայտնել՝ ինչ առիթով եւ լինի, թէ կուզ տանջեն ու չարչա-

րեն, թէկուզ մահ սպառնան. պէտք է մտածել, թէ գուցէ այդ գաղտնիքից է կախուած շատերի խաղաղութիւնը, ապահովութիւնն եւ մինչեւ անգամ կեանքը։ Օրէնքը սաստիկ է պատփում գաղտնիք հրատարակողին։ Օրինակ՝ պատերազմի ժամանակ՝ եթէ պահնորդական գծի վերայ կանգնող պահնորդներից մէկը յայտնի ճանապարհի անցքի գաղտնիքը, այնպիսի մեզաւոր՝ նայելով հանգամանքին՝ կարող է ենթարկուիլ մահուան պատճի։

Անպայման հպատակիլ մեծաւորի կամքին – նշանակում է կատարել նորա կամքը առանց դիմադրելու եւ հակաճառութեան. այս երգումը պինդ պահող զինուորներն անյազթելի են. նորա կատարելով մեծաւորի հանճարեղ կամքն եւ հրամանները՝ միշտ միասիրոտ եւ միահոգի կը

յարձակուին թշնամու վերայ եւ այն ժամանակը ոչինչ չի դիմանալ նրանց։ Այս երգւմնական խոստումը զինուորական կարգապահութեան հիմքն է։

Չը հեռանալ այն զօրաբաժնից, որի մէջ դուք գտնուում էք։ Մեծ է Ռուսական քաջայազթ եւ իառաւոր զօրաբանակը, այդ պատճառաւ նա մաս մաս է բաժանած. դոքա են կօրպումները, դիվիզիանները, բրիգադները եւ գնդերը. գնդերն էլ բաղկացած են բատալիոններից եւ վաշտերից (բուռ)։ Ծառայութեան մէջ մոտած ժամանակ ձեզանից իւրաքանչյուրը մի որ եւ է գնդի մէջ է նշանակուում։ Այդ տեղ ահա դուք երդուել էք լը հեռանալ ձեր զօրաբաժններից առանց մեծաւորի հրամանի։ Հենց որ գնդի մէջ ընդունուեցաք, գնդապետը ձեզ նշանակում է մի վաշտի մէջ։

Զեր վաշտումը, որ ձեր համար ամենամերձաւոր զօրաբաժինն է, դուք գտնում էք ամէն ինչ՝ թէ ձեզ ծառայութեան մէջ վարժեցնող դաստիարակ եւ ընկերներ եւ թէ լաւ բարեկամներ, որոնք պատրաստ են կարեկից լինել ձեր վշտերին, ուրախանալ ձեզ հետ միասին, մասնակից լինել ձեր նեղութիւններին, ձախորդութիւններին, որոնք յաճախ անբաժան են զինուորական ծառայութեան մէջ, իսկ կուոչի մէջ թշնամու դէմնոքա պատրաստ են պաշտպանել եւ ազատել ձեզ:

Վաշտը զինուորի համար երկրորդ տուն է, նա պէտք սիրի իւր վաշտը, նա պէտք է ուրախ լինի նորա բաղդաւորութեան համար եւ տիսրի անյաջողութիւնների վերայ:

Այն գունդը, որին գուք պատկանում էք, ինչպէս ասացինք, ուուսական ամբողջ զօ-

րաբանակի մի մասն է. իսկ զօրաբանակը մի մեծ զինուորական ընտանիք է, ուրեմն զօրաբանակի ամէն մի անդամը, թէ ինչպէս մասնաւոր մարդ եւ թէ ինչպէս զօրաբանակի մի մասը, պարտական է թշնամու հետ պատահած ժամանակ պաշտպանել եւ ազատել իւր ընկերին:

Ազատեցէք, պաշտպանեցէք աներկիւզ նուրան, ով չը վերադառնալու մոքով թշնամու գէմ է զնում, հաւատացած եղէք, որ ձեզ էլ չեն բարձի թողի անիլ ձեր գժուար բոպէներում: Պատերազմում՝ զօրաբաժինների մէջ՝ զանազանութիւնը, կարծես, մի տեսակ վերանում է, որովհետեւ ամէնքն էլ մի նուիրական նպատակ ունին. այն է՝ յաղթել: Նատ անգամ է պատահում, որ զօրաբաժինները խառնուում են. ուստի եթէ պատահի, որ գուք մի գիւղուածով մանէք մի ուրիշ սպայի (օգիտէր) կամ ենթ-սպայի (ունտէր-օգիտցերի) իշխանու-

թեան ներքոյ, պարտական էք առանց դիմադրութեան կատարել նոյնպէս եւ նորա հրամանները եւ ինչպէս ասացի այն պատճառոււ, որ այդ հրաման տուողը միեւնոյն նպատակն ունի, ինչ որ ձեր մեծաւորն ունէր։ Ամէնքի ընդհանուր նպատակը յաղթութիւնն է, յաղթութիւնից յետոյ՝ փառքը, փառքից յետոյ՝ Թագաւորի «շնորհակալ եմ» խոսքը, նորա շնորհազեղ ովորմութիւնը, նորա պարգեւները։ Բայց եւ այնպէս հարկաւոր չէ ուրիշն օգնութիւն համնելու եւ վասնգից ազատելու համար առանց իւր գլխաւորի գիտութեան հեւանալ իւր զօրաբաժնից։ Իւրաքանչիւր գունդ ունի իւր պատմութիւնը, գնդի ամէն մի անդամը պարտական է գիտենալ, թէ նորա մէջ ովքեր են գերազանց հանդիսացել, իւր գունդը ինչ ծառայութիւններ է արել Թագաւորի եւ Հայրենիքի համար, նա պէտք է

գիտենայ իւր գնդի պատիւը բարձրացնել թշնամեաց վերայ յարձակուելուս. նա ոչ միայն պէտք է նախանձախնդիր լինի իւր զօրաբաժնի պատերազմական փառքին, նա պէտք է խաղաղութեան ժամանակն էլ իւր ժրածան ծառայութեամբն, իւր գերազանց վարքովը պահպանի ու բարձրացնի իւր գնդի բարի անտեն ու պատիւը։

Նատ գէպքեր կան, երբ զինուորը խաղաղութեան ժամանակն էլ կարող է ապացուցանել, որ ինքը Թագաւորի եւ Հայրենիքի բարօրութեան եւ հանգստութեան համար պատրաստ է զոհել իւր անձը։

Նորա պատրաստականութիւնը կերեւայ, երբ նա ճշգութեամբ կը կատարի իւր պահնորդական ծառայութիւնները, իւր անձը չի ինայիլ նեղայածների փրկութեան համար եւ ամէն միջոց ի գործ կը գնի կասկածաւոր եւ չարամիտ մարդիկներին բռնելու։

Նատ օրինակներ են ե ել, երբ Ռուսի զինուուրը թէ անցեալ ժամանակներումն եւ թէ մեր օրերը խաղաղութեան միջոցը իւր պարտքը ճշգութեամբ կատարել է:

Ահա պահնորդական եւ բերդապահական կեանքից օրինակներ.

1833 թուին, յունվարի 11-ին Աղքերմանի ինվալիդի զօրահատուածի ստորին զինուոր Սիմեոն Պուլիշչուկը գանձարանի մօտ պահնորդ էր Տուղլաղ կոչուած տեղումը։ Այդ ժամանակը խիստ երկրաշարժ եղաւ։ Դիւանատան բոլոր աստիճանաւորները եւ ծառայողները դուրս փախան փողոց, որ ազատուին, իսկ Պուլիշչուկը՝ ըստ նայելով՝ որ վտանգը խիստ զգալի էր, ըստ նայելով՝ որ ինքը կարող էր ամենից առաջ դուրս փախչել եւ գլուխն ազատել, այնու ամենայնիւ մնաց իւր տեղումը։ Երկրաշարժից յետոյ նորան գտան

իւր տեղումն անշարժ կանգնած՝ հրացանը ձեռքին։

Թագաւոր կայսրն իմանալով այս անցքը բարեհաճեց հրամայել, ստորին զինուոր Պուլիշչուկին իւր օրինակելի անվեհերութեան եւ խիստ պարտաճանաչութեան համար բարձրացնել ենթ—սպայութեան աստիճանի եւ միանուագ պարգեւ տալ նորան 300 մանէթ, իսկ նորա այս արարքը հռչակել ամբող զօրաբանակի մէջ։

1880 թուին չարագործ մարդիկ ցանկաւով զրկել մեզ՝ Ռուսներիս մեր թագաւոր Կայորից՝ Ալեքսանդր Բ-ից, Ղճուեցին օդը ցնդեցնել թագաւորի ձմերային պալատը, կարծելով, որ նորա աւերակների տակ Ազատարար թագաւորը կը ոչնչանայ, բայց Աստուած ազատեց իւր Օծելոյն եւ միայն Ֆինլանդեան թիկնապահ գնդից մի պալատական պահնորդ վնասուեց։

Յին փետրվարի՝ այն ինչ բոլոր արքայական գերդաստանը ճաշի էր նստած՝ լուսեցաւ մի ստորերկրեայ թնդիւն եւ ամբողջ սեղանատունն երերուեց. ճայթիւնն ամենից առաւել ներգործեց պահնորդների վերայ. բայց Ֆինլանդեան գնդի պահնորդներից եւ ոչ մինը չը թողեց իւր տեղը, չը կորցրեց իրեն, թէ եւ վորանգը պարզ եւ մեծ էր:

Մի քանի մարդիկ սպանուեցան եւ ոմանք էլ հաշմանդամ դարձան:

Մեռածների մարմինները մեծ յարգանքի արժանացան, նոյցայուղարկաւորում էր ինքը Քաղաւորն ամբողջ գերդաստանով. իսկ նոյցա ընտանիքի համար, ինչպէս եւ բոլոր վիրաւորների ընտանիքի համար, Ռուսաստանի ամէն կողմերից առատ նուիրատուութիւններ ուղարկուեցան: Թագաւորն իւր գերդաստանի հետ նոյնպէս զոհաբերութիւն արաւ: Հաւաքուեցաւ 88325 մ. 61^{1/2}, կ:

Պահնորդներից եւ ոչ մինը չը մնաց առանց թագաւորական ողորմութեան, ամբողջ Հայրենիքը սրտապիր գոհանակովթիւն յայտնեց Ֆինլանդեան գնդին: Նոյցա գերդաստանը ապահովուեցաւ, հաշմանդամներն էլ նոյնպէս, մնացած չը վնասուած պահնորդներից իւրաքանչիւրն էլ ստացան 50-ական մանկթ:

Բայց կան եւ այնպիսի անպիտաններ, որոնք ոչ միայն չեն աշխատում պահպաններ իւրեանց զօրաբաժնի պատիւն եւ փառքը, ընդհակառակին նախատինք են լինում. գոքա են փախատականները՝ վնասակար անդամները:

Փախստականներից ոմանք յետ են գառնում իւրեանց ծնած տեղը, բայց թէ հասարակովթիւնը եւ թէ նոյն իսկ իւր ընտանիքը չեն ընդունում նորան. Հայրը մասնում է իւր որդուն՝ ինչպէս մի վախատականի, ինչպէս երդմնադրութ մարդու: Թը-

բեւ ապացոյց ասածիս՝ ահա ձեզ օրինակներ։
 1862 թուին, յունվարի 7-ին Կօրլինեան
 ինվալիդի զօրահատուածից մի ենթ-սպայ
 Պետրոս Կօնով ժամանակաւոր արձակուած էր
 իւր գնդից եւ կենում էր իւր ծննդավայրում՝
 Ռեղանի նահանգի, Պրօնի գաւառի, Տրօիցիլի
 գիւղումը։ Նա մի անգամ գնաց Միխայլով
 քաղաքը, այնուեղ պատահեցաւ իւր հարա-
 զատ եղբայր, ստորին զինուոր Եւսէյ Կօնո-
 վին, որ փախել էր ծառայութիւնից Պեն-
 զայի բատալիոնի ներքին պահորդների մի-
 ջից։ Պետրոսը բունեց իւր եղբօրն եւ մատ-
 նեց իշխանութեամբ։

Թագաւորին առաջարկեցին ենթ-սպայ Կօ-
 նովի այնպիսի ուստասպահութեան եւ հա-
 ւատարիմ պարտաճանաչութեան մասին։ Նա
 բարեհաճեց պարգեւատրել Կօնովին արծաթէ-
 շքանշանով «ցերմեռանդ» ծառայութեան
 համար։ մակադրութեամբ։

1884 թուի, յունվարի 16-ին, Պեչօրեան
 գնդից մի ջահէլ զինուոր՝ Սերգէյ Միխայլի-
 յով անունով փախաւ, Երբ որ նորան վե-
 րադարձրին, տուին գնդի գատաստանին։
 Ահա թէ ինչ ասաց քննութեան ժամա-
 նակ Սերգէյ Միխայլովն եւ իւր ասած-
 ները կրկնեց դատարանումը։ Ծառայու-
 թեանս ծանրութիւնների համար չեմ բազո-
 քում, ոյինչ նեղութիւն կամ անարդարներ
 չեմ ստացել երբէք, գնացի միայն երկիրս՝
 սրտիս տիսրութիւնից եւ աղգականներիս տե-
 սութեան փափագով։ Գնացի տուն եւ ծնո-
 դացաւ պատմեցի, որ ծառայութիւնը թողել,
 չեռացել եմ։ Իսկոյն նոքա ինձ ներկա-
 յացըն Պօրխովի ոստիկանատունը, որտեղից
 ինձ ուղարկեցին Պակով քաղաքը, այնտեղից
 էլ բերին Ս. Պետերբուրգ եւ բանտարկե-
 ցին։ Վաս մայիս մայիս բանձ զյո մայ
 Խնչպէս որ արեց ենթ-սպայ Կօնովը եւ
 Սերգէյ Միխայլովի ծնողը, նոյնը պար-

տական է անել ամէն մի ազնիւ մարդ եւ
թագաւորի հաւատարիմ հպատակը. իսկ նո՞-
քա, որ այդպիսի անպիտաններին կը պաշտ-
պանեն, նրանք արժանի են մի եւ նոյն պատ-
ժին, ինչ որ վայել է փախստականներին:

Զօրաբաժնից փախչողն արժանի է ամե-
նատեսակ անարդանիների եւ նախատինք-
ների, ամէնքը պէտք է զզուեն նորանից:
Եթէ պատահում է, որ խաղաղութեան ժա-
մանակ այսպիսի մարդկանց թոյլ են տա-
լիս մնալ խօսքին եւ երգումին հաւատա-
րիմների հետ միասին՝ այդ միայն ա-
նում են նորա համար, որ թագաւորը յոյս
ունի, թէ նրանք կողղուին, թէ կը յիշեն
իւրեանց տուած երգումը, որ արել են
Աստուծոյ առաջին: Պատերազմի միջոցն այն-
պիսիներին ուղելու ժամանակ ըլ կայ,
այն օրը թամադ արժեն միայն ազնիւ, հա-
ւատարիմ, հնազանդ, քաջ եւ անձնազո՞չ
զինուորները՝ թագաւորի եւ Հայրենիքի այս

պատուական զաւակները: Պատերազմական
միջոցում հենց ինչպէս ապացուցուեցաւ, որ
մէկը յօդուտ թշնամու շահերի փախել է,
կամ իւր նշանակուած տեղից հեռացել է,
յանցաւորը զինուորական կանոնագրքի 245
յօդուածի համաձայն կենթարկուի մահուան
պատժի:

Յօդուտ թշնամու շահերի փախչել – նշա-
նակում է փախենալ եւ քաշուիլ թշնամուց:
Երկուութիւնը զինուորի համար մի ամօ-
թալի գործ է, նա կը մատնի նորան կորստի
եւ կը դատապարտի մահուան, ուստի եւ
ամէն ոք պէտք է սպանի իւր մէջ այդ-
յատկութիւնը, մտքումը ծնելուն պէս՝ ար-
մատահան անի նրան: Եր կէ ոտ անուն
ստանալուց վատ բան ըլ կայ զինուորի հա-
մար, այդպիսի մարդկին ամէնքը կը նախա-
տեն, ամէնքը կը ինդան նորա վերայ, կը ծաղ-
րեն, նա տեղ չանի քաջ եւ կորիճ ընկեր-
ների մէջ:

Այն զինուորը, որ թշնամու գնդակի սուլումից աչք կը թերթի, նա, որ թշնամու սուրն իւր կրծքին շողալուս կը շփոթուի, յետ կրփախի եւ պատճառ կը լինի ուրիշներին էլ իւր հետ տեղի տալու, այնպիսին քաջ եւ անձնազոհ զինուոր չի, նա մի երկշու մարդէ, որ մոռացել է իւր տուած խոստումք՝ Թագաւորի եւ Հայրենիքի համար անձը չը խնայել: Ուստի այնպիսին Զինուորական Կանոնագրքի 246 յօդ. համաձայն կը զրկուի իւր կեանքի բոլոր իրաւոնքներից եւ մահուան կը դատապարտուի՝ զրկուելով իւր բոլոր զինուորական պատիւներից: Յայրեն գումար Յիշեցեցէք ամէնքդ, որ փառաւոր մահը աւելի գերազանց է, քան նախատալից կեանքը, որ մեռնելն ամօթ չէ: Յայրեն բայց առաջ բայց բայց Բայց փախստականների համար այնքան իւրեանց զօրաբաժնից հեռանալը չէ ամորգանք, որքան այն, որ նա Որու զինուոր է, որ դիտմամբ լինասելով իւր մի անդամը,

ստացել է անդ ամնա խեղ ամունք: Եսպիսի գէպքեր թէեւ հազիւ են, բայց տարաբաղդաբար լինում են:

Այնդամնախեղ կոչուում են նոքա, ուրոնք դիտմամբ իւրեանց մարմնի որեւ է մասը վնասում են, որ ծառայութիւնից փախս տան: Այդպիսիները մեծ յանցանք են գործում եւ իւրեանց նապատակին չեն համուամ: Զինուորական օրէնքին համաձայն անդամնակեղներին էլի վերցնում են ծառայութեան մէջ, բայց պատժի են ենթարկում:

Եթէ մէկն իւր անդամը վնասել է ծառութեան մէջ, այնպիսին Բարձրագոյն հրամանաւ ոչինչ գէպքում չի արձակուում ծառայութիւնից եւ իւր ծառայակիցներից վազ չի կարողանում հաշուիլ պահեստի մէջ (ՅԵ զառած արմի):

Այնպիսի մարդիկ արժանի են ամէն մի Ռուսի թուք ու նախստամնքին: Նշանակում է, որ նոյց մէջ իւրեանց հայրերի արիւնը

չի եռում; այն հայրերի, որ Թագաւորի ու
Հայրենիքի սիրուն ու հաւատարիմ հպատա-
կութեամբը փառաւոր անոնց են ստացել.
Նշանակում է նոքա չեն կարողանում; չեն
վստահանում իւրեանց գլուխը յետ դնել
հայրենի երկրի եւ սուրբ ծննդավայրի համար:

Չը չեռանալ ձեր գրօշակից, գր-
նալ նորա քամակից, որքան ողջ էք:
Դրօշակը միեւնոյն է, ինչ որ խաչվառը:

Դրօշակը պարգեւում է ինքը Թագաւ-
որ Կայսրն առանձին հրովարտակով: Այս
խօսքերուն է վերջանում այն հրովարտակը.
«Հրամայում ենք համաձայն կանոնի օծել
այս գրօշակը եւ գործ ածել Մեր եւ
Հայրենիքի ծառայութեան մէջ հաւատար-
մութեամբ եւ եռանդով, ինչպէս որ յատուկ
է Ուռաց զինուորութեանը:» Այդ պատ-
ճառաւ գրօշակը զօրաբաժնին յանձնելուց
յառաջ՝ ամբողջ զօրաբաժնի առաջին մաղ-

թանք են կատարում եւ օծում: Դրօշակը
ամէն մի զինուորական ծառայողի յիշեցնումէ
այն ամէնը, ինչ որ իւր համար սուրբ եւ նովի-
րական է. այն է՝ հաւատը, Թագաւորը եւ Հայ-
րենիքը: Հ աւ ա տը յիշեցնումէ իւր վրայի
խաչով, Թ ա գ ա ւ ո ր ին յիշեցնումէ նորա-
նով, որ կտակի վրայ Թագաւորի անուան
սկզբնատառերը կան, իսկ հայրենի դրօշը՝
երգլսեան արծիւը յիշեցնում է Հայրե-
ն իւր ը:

Որպէս զի ամէն մէկը կարողանայ տեսնել
այս սուրբ խաչվառն եւ ազօթել նորա առա-
ջին, նորան տնկում են մի փայտի վերայ
եւ մի արժանաւոր ենթ-սպայ կրում է զօրքի
առաջին:

Ուրեմն գրօշի վերայ գուք գտնում էք
այն ամէնը, ինչ որ երգուել էք պաշտպա-
նել մինչեւ ձեր վերջին արեան կաթիլը:
Պաշտպանելով գրօշակը՝ գուք պաշտպա-
նում էք հաւատը, Թագաւորին եւ Հայրե-

նիքը: Եւ ահա ապացոյց, որ դուք ճշմարիստ
որ պատրաստ էք այս սրբազն եւ ամէն
մի Ռուսի համար նուիրական սրբութեան
վերայ ձեր անձը դնել. դուք երդուել էք
չետևել նորան մինչև կենդանի էք:
Ով որ կը թողու, կը հեռանայ դրօշակից, նա
հեռանում է իւր զօրաբաժնից, նա մոռա-
նում է իւր հաւատը, Թագաւորին եւ Հայ-
րենիքը եւ ուրեմն այնպիսին երկչու եւ դա-
սածան է: Դրօշակը թշնամուն տալը ամե-
նամեծ նախատինք է, ամենաբարձր ան-
պատութիւն է, այդ միեւնոյն է, թէ մարդ-
ինքն իրեն մատնում է խայտառակութեան,
թոյլ է տալիս ոտնատակ տալու իւր բոլոր
սրբութիւնները: Դորանից ամենածանր յան-
ցանք ըլ կայ:

Որ ամէնքը հասկանան, թէ դրօշակը
կորցնելու համար ինչ պատասխանատուու-
թիւն ունի այն զօրաբաժնը, որի պաշտ-
պանութեանն է յանձնուած դրօշակը, ամէն-

քի առաջին կարգում են Զինուորական քրէա-
կան Օրինագրքի յօդուածները:
Ահա ինչ է ասում 247 յօդուածը.
Պատերազմում դրօշակը կորցնելու համար
այն զօրաբաժնը, կամ զօրահատուածը, որին
պատկանում էր դրօշակը, եթէ ամէն հնարք
չի գործ դնում աղատել, նոքա՝ որոնց յանձ-
նուած էր դրօշի պահպանութիւնը, դատա-
պարտուում են զրկուելու բոլոր իրաւունք-
ներից եւ մահուան պատժին ենթարկուե-
լու՝ գնդակահար լինելով, իսկ զօրաբաժնը
ցրիւ է տրուում զանազան բաժինների մէջ:
Դուք տեսնում էք, որ իւր դրօշակը լլ
պահպանող զօրաբաժնը, ինչպէս պարտա-
մու եւ երգմնազանց մի բաժին, ունելով
իւր մէջ շատ անպիտան երկչու մարդիկ,
ցրիւ է տրուում եւ ոչնչանում է, իսկ ում
ձեռքից որ խլուել է, որոնք չեն կարողացել
պաշտպանել, նոքա գնդակահար են լինում:
Ուղիղն ասած՝ նախանձելի չէ այն մարդկանց

վիճակը, որոնք ցրուած են այս ու այն զօրաբաժինների մէջ, նոցա ճակատին դրոշմուռմ է Ռուսի զինուորի համար նախատական խօսքը «Երկչուած»: Պատերազմի ժամանակ գրօշակը կորցնելուն նախատինքը հրատարակուում է ամբողջ Հայքենիքի մէջ, որովհետեւ առանձին Բարձրագոյն հրամանով գրօշագուրկ զօրաբաժինը ոչնչանում է:

Նատ օրինակներ կան, երբ ռուս զինուորը կարողացել է պաշտպանել իւր գրօշակը, եւ միայն այն ժամանակն է ձեռք քաշել իւր սրբութիւնից, երբ ոյժը չի ներել իրեն:

1877 թուին, հոկտեմբերի 12-ին Պատլովեան Աէյր գվարդի գնդի 4-րդ բատալիոնը յարձակում գործելով Գօրնո—Դուբնեակի բեգուտի վրայ՝ սահտիկ վնասուեց: Բատալիոնի գրօշակին էր ենթ—սպայ Միտրոֆան Խվանովը: Նա հասկանում էր, թէ ինչպիսի նուիրական բան է յանձնուած

իրեն, նա զգում էր որ բատալիոնի պատիւն եւ փառքն իւր ձեռքումն է:

Պատերազմի սարսափելի բովէլն գրօշակը մօտ նշանակուած երկու ընթերականները (ասսիտենտներ) նկատում են, որ Խվանովն երերուում է:

Նոքա մօտենում են Խվանովին եւ կամենալով պաշտպանել գրօշը՝ հարցնում են. քեզ ի՞նչ պատահեցաւ: Միտրոֆան Խվանովը հազիւ կարողանալով սոքի վերայ կանգնել՝ սաստիկ հայեացք ձգեց ընկերակիցների վերայ եւ ասաց. «Ես գեռ կենդանի եմ»:

Եւ արդարեւ, չը նայելով իւր ստացած մահացու վէրքին, նա հպարառութեամբ կրում էր գրօշակը: Դրօշակը մի քանի տեղից ծակծկուած էր, Միտրոֆան Խվանովն արենաշաղախ էր եղել, բայց չէր ուզում բաժանուիլ իւր սրբութիւնից, մինդեռ ոյժը նրան ներում էր սոքի վերայ մնալ: «— Ճեռացէք, յորդորում էր Խվանովին

ընթերական, տեսնելով՝ որ ողօրմեխն բռպէ
առ բռպէ թուղանում է:

«Եզայր, ես դեռ չեմ մեռել, երբ կը
մեռնեմ, գրօշակը դու կը կրես, տեսնումես՝
ինչպէս եմ ման գալի: Նա կամեցաւ տոք
բարձրացնել, բայց քիչ մնաց վայր էր ընկ-
նում:

Երկար ժամանակ դեռ տաճում էր Միտ-
րօֆան Իվանովը՝ սայթաքելով եւ շուտ շուտ
կսնդ առնելով՝ որ մի խոր հոգւոց բաշի.
Վերջապէս երբ խսպառ ուժահատ եղաւ, նա
սիրթնած ինչպէս քաթան, հազիւ արտա-
սանեց «վերյու»: Ասաց եւ գրօշակը տուեց
ընթերակային: Միւս ընթերական տեսնելով,
որ Իվանովը վայր է ընկնում եւ հազիւ է
շնչում, մօտ վագեց նորա գլուխը բռնելու,
բայց արդէն ուշ էր: Միտրօֆան Իվանովը
մեռած ընկած էր:

Հանգուցեան իրեն արժանաւոր վոխա-
նորդ էլ ընտրեց: Հենց ինչպէս ընթերական

վերյու գրօշակը, իոկոյն նրան վիրաւորե-
ցին. բայց նորա վէրքը կապեցին եւ նա
հապարտութեամբ յառաջ տարաւ գրօշակը՝
թաթախելով իւր սեպհական արիւնով:

Դեռ շատ օրինակներ կարելի էր բերել
անցեալից եւ մօտ օրերից, թէ ինչպէս Ռուսի
զինուորը պաշտպանել է գրօշակը:

Նմաննեցէք այն հերոսներին. դուք ոչ միայն
ձեր կենդանութեան ժամանակ փառք եւ
պատիւ կը վաստակէք, ձեր մահից յետոյ էլ
չեն մոռացովիլ ձեր անունները եւ քաջա-
գործութիւնները, ինչպէս չեն մոռացուում
ձեր նախնիքներինը եւ պապերինը:

Վերջին երդումը որ արել էք, որով վեր-
ջացրել էք ձեր խոստումը, այդ այն է՝ որ
դուք ուխտել էք միշտ պահպանել ձեզ այն-
պէս, ինչպէս վայել է ազնիւ, հաւասար-
իմ, հնագանդ, բաջ և անձնազո՞չ
մարդին: Աղաջեցէք Աստուծում, որ օգնի

Ճեզ կատարել Ճեր ուխտը Թագաւորի եւ
Հայրենիքի ծառայութեան մէջ:

Աղնիւ վարուել—նշանակում է այն-
պէս վարուել, որ ոչ մարդիկն եւ ոչ Ճեր
խիղճը, որ ամենախիստ դատաւորն է, ըլ
կարողանան նախատել, թէ դուք չը կա-
րողացաք Ճեր կարողութեան չափ կատարել
Ճեզ յանձնուած գործերը:

— Անձնազոհութեամբ գործել—
նշանակում է յանձնած գործը արագութեամբ
եւ խոչեմութեամբ կատարել: Այդ պատ-
ճառաւ մինչեւ Ճեզ յանձնածը կատարելը
դուք շտապով կշռեցէք Ճեր մէջ, խորհեցէք
եւ երբ համոզուեցաք, որ լաւ հասկացել էք
ամէն բան, չափել կշռել էք, այն ժամանակ
միայն գործեցէք:

Առաւել լաւ է մի քանի անզամ հարց ու
փորձ անել, մտածել, քան թէ շտապաւ կա-
տարել, կամ խոչեմութեամբ չը գործել.

անխոչեմ շտապողականութիւնը
առաւել լինաս կը բերի, քան թէ օգուտ,
մանաւանդ՝ պատերազմական միջոցը:

Յիշեցէք, ուրեմն, Ճեր երդումը, յիշեցէք,
որ դուք հաստատել էք Ճեր երդումը՝ մեր
Փրկչի խաչն ու աւետարանը համբուրելով,
մի մոռանաք, որ այս երդումն է զինուորի
կեանիքի հիմունքը, նորա հոգին: Կատարե-
լով Ճեր երդումը՝ դուք նմանեցէք Ճեր փա-
ռաւոր նախնիքներին:

Նա միայն չի հասկանում երդման սրբու-
թիւնն ու վսեմութիւնը, ով Աստուծուն մո-
ռացել է, ով իր խիղճը կորցրել է, որի
համար ոչինչ սուրբ բան չը կայ, որի համար
Հայրենիքի մեծութիւնը, փառքն եւ բարօ-
րութիւնը ոչինչ չարժեն: Երդմանազմնցու-
թիւնն անպատիժ չի մնալ. երդմանադրութը,
եթէ մարդկային դատաստանից էլ փախս-
տայ, Աստուծոյ դատաստանից չի կարող
երբէք փախչել: Ով երդումը սրբութեամբ

Եւ իսկութեամբ կը կատարի, նա թող քող
բովին վստահ լինի, որ իւր ազօթքը Աստուծ
առաջին եւ ծառայութիւնը Թագաւորի առ
ջին ի զուր չեն անց կենալ, չեն կորչիլ:

ԵՐԳՄԱՆ ԵՒ ԴՐՈՉԱԿԻ ՆԲ ՀՅԱՎԱԿԱԻԹԻԻՆԲ

Երդումը մի ուխտ է, որ անում եմ եւ¹
Աստուծոյ առաջին, լինել ազնիւ, հաւատա-
րիմ, հնազանդ, քաջ եւ անձնուէր պատրաս-
տական ծառայ Թագաւորին, Նորա ժառան-
գին եւ Հայրենիքին:

Դրօշակը մի սուրբ խաչվառ է, որի ետե-
ւից պէտք գնան ամեն տեղ իւրեանց երդ-
ման հաւատարիմ զինուորներն եւ պաշտ-
պաննեն մինչեւ արեան վերջին կաթիլլ:



2013



